ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

4 մարտի, 2024 թ.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի մարտի 4-ին՝ ժամը 16:00-ին, տեսակապի միջոցով: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամ	Հայկ Գրիգորյանը
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	Խաչատուր Պողոսյանը
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ	Աննա Վարդապետյանը
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ	Պարույր Հովհաննիսյանը
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ	Սիմոն Բաբայանը
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռուստամ Բաքոյանը
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» նախագահ	Արթուր Սաքունցը

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի ավագ մասնագետ Սերգեյ Հովհաննիսյանը:

Ա. Դիլանյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Օրակարգային հարց՝ քննարկվեց հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը պարզելու կամ թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող հավելյալ տեղեկություններ պահանջելու մասին 2024 թվականի մարտի 1-ի նիստում քննարկված որոշումների նախագծերի կապակցությամբ որոշումներ ընդունելու հարցը:

Հանձնաժողովը միաձայն որոշեց փաստաթղթային ստուգման փուլում հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի համապատասխանության ստուգման, ինչպես նաև հավակնորդների վերաբերյալ հավելյալ այլ տեղեկություններ ստանալու նպատակով համապատասխան հարցում ուղարկել Դատական դեպարտամենտ, Հայաստանի Հանրապետության առողջապահության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություններ, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ:

Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին նաև թվով վեց հավակնորդներից պահանջել վերջիններիս ներկայացրած տեղեկությունների վերաբերյալ հավելյալ փաստաթղթեր և վերացնել որոշ փաստաթղթերում տեղ գտած թերությունները (անհամապատասխանությունները): Շտկումների և փաստաթղթերի ներկայացման համար սահմանվեց 3 աշխատանքային օր:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամ ***Արթուր Սաքունցը*** ներկայացրեց առաջարկություններ՝ հավակնորդների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ պահանջելու մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ուղարկել հարցում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ և Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան՝ փաստաբանական գործունեության կամ պաշտոնավարման ժամանակահատվածում համապատասխան հավակնորդներին կարգապահական պատասխանատվության ենթարկած լինելու վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու նպատակով:

Ձայների հարաբերակցությունը՝ միաձայն

2. ուղարկել հարցում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն՝ նաև վարորդական վկայական ունեցող հավակնորդների կողմից վերջին 3 տարվա ընթացքում ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների առկայության դեպքում խախտումների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ տրամադրելու նպատակով:

Ձայների հարաբերակցությունը՝ կողմ՝ 5, դեմ՝ 3

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **Արման Դիլանյան** **[ստորագրված]**

Հայկ Գրիգորյան **[ստորագրված]**

Խաչատուր Պողոսյան **[ստորագրված]**

Աննա Վարդապետյան **[ստորագրված]**

Պարույր Հովհաննիսյան **[ստորագրված]**

Սիմոն Բաբայան **[ստորագրված]**

Ռուստամ Բաքոյան **[ստորագրված]**

Արթուր Սաքունց **[ստորագրված]**

Արձանագրող՝ Սերգեյ Հովհաննիսյան **[ստորագրված]**